

**ԱՐԱՐԱՏԻ ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆԻ**

**2015թ.-ի տարեկան հաշվետվություն**

Արարատի Օրհուս կենտրոնը 2015թ. աշխատանքային գործունեությունը սկսել է հունվար ամսից: Ելնելով 2015 թ. աշխատանքային պայմանագրի եւ հանձնարարականի պահանջներից եւ հիմնական առաքելությունից, որ Օրհուս կենտրոնը հարթակ է հանդիսանում շրջակա միջավայրի խնդիրների լուծումների եւ բնապահպանական անվտանգության հարցերի վերաբերյալ հանդիպումների, քննարկումների, կլոր սեղանների անցկացման համար, ինչպես նախկինում, 2015թ ընթացքում ևս կենտրոնի հիմնական գործողությունները ուղղվել են Օրհուսի կոնվենցիայի իրականացման աջակցմանը:

Ինչպես նախկինում, 2015թ ընթացքում Արարատի Օրհուս կենտրոնը հարթակ է հանդիսացել պետական պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար՝ հանդիպելու, քննարկելու, երկխոսելու և լուծելու շրջակա միջավայրի և բնապահպանական անվտանգությանը վերաբերող հարցեր:

Ըստ ծրագրի նպատակին հասնելու ժամանակացույցով նախատեսված գործողությունների, ինչպես նաև ընթացքում ծագած խնդիրներին լուծում տալու նպատակով, հաշվետու ժամանակահատվածում՝ 2015թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, Օրհուս կենտրոնը առանձին կամ այլ կազմակերպությունների հետ համագործակցությամբ իրականացրել 27 միջոցառում, այդ թվում տեղեկատվության մատչելիության ուղղությամբ միջոցառում, հասարակության մասնակցության ուղղությամբ, արդարադատության մատչելիության ուղղությամբ ու էկոկրթությանն ուղղված 8 միջոցառում, ուղղարկվել են 3 հարցումներ, կատարվել են 8 իրազեկման միջոցառումներ՝ ՏԻՄ և մարզային կառավարման մարմինների պաշտոնատար անձանց համար՝ Օրհուսի կոնվենցիայով և ազգային օրենսդրությամբ իրենց պարտավորությունների մասին:

*/Կից ֆայլով կարող եք տեսնել մանրամասն վիճակագրական հաշվետվությունը /*

**Արարատի Օրհուս կենտրոնի կատարած աշխատանքներն ըստ տեխնիկական հանձնարարականի կետերի .**

✓ *Իրականացվող ծրագրի նպատակներին համահունչ մշակել գործունեության աշխատանքային ծրագիր, հաշվի առնելով տարածաշրջանի բնապահպանական առանձնահատկությունները և առկա իրողությունները՝*

Կենտրոնը ունի տեխնիկական հանձնարարականի կետերի վրա հիմնված եւ փորձագետների խորհրդի կողմից հաստատված տարեկան աշխատանքային պլան, որով առաջնորդվում է կենտրոնը և որտեղ հաշվի են առնվել նաև տարածքային առանձնահատկություններն ու տեղի բնապահպանական խնդիրները:

✓ *Շրջակա միջավայրի առնչությամբ կարևոր որոշումների կայացման գործընթացի և ոլորտային հիմնախնդիրների վերաբերյալ կազմակերպել հանդիպումներ, քննարկումներ,*

*մամլո ասուլիսներ, դասընթացներ, իրազեկության բարձրացման միջոցառումներ՝ ոլորտի պատասխանատուների, ՔՀԿ-ների, ԶԼՄ-ների, կրթական հաստատությունների և այլ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ,*

Արարատի Օրիուս կենտրոնը պատանի լրագրողների համար անցկացրել է էկոկրթությանն ուղղված մեկ լրագրողական դասընթաց:

- ✓ *ՏԻՄ-երի և մարզպետարանների աշխատակիցների համար կազմակերպել իրազեկման միջոցառումներ՝ ազգային օրենսդրության և Օրիուսի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման և դրանց համաձայնեցման վերաբերյալ,*
- ✓ Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնը Օրիուսի կոնվենցիայիով ստանձնած պարտավորությունների վերաբերյալ 8 վերապատրաստման դասընթացներ են իրականացրել ՏԻՄ ներկայացուցիչների համար: Միջոցառումները անց են կացվել Արմաշ, Այգավան, Արաքսավան, Նոյակերտ, Շաղափ, Գոռավան, Փոքր Վեդի և Եղեգնավան գյուղական համայնքների գյուղապետարաններում: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնը նաև վերոնշյալ համայնքներում ներկայացրել է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքն ու օրենքում նախատեսվող փոփոխությունների ու լրացումների ԲՆ օրենսդրական նախաձեռնությունը:



✓ *Նպաստել Օրհուսի և մյուս բնապահպանական Կոնվենցիաների համատեղ գործողությունների իրականացմանը*

Համագործակցություն է եղել այլ կազմակերպությունների հետ, որոնք գործողություններ են իրականացնում տարբեր կոնվենցիաների մասին իրազեկությունը բարձրացնելու և իրականացմանը նպաստելու ուղղությամբ: Ինչպես նաև վերոնշյալ համայնքներում աշխատանքներ են տարվել Կլիմայի փոփոխության մասին կոնվենցիայի շրջանակում, մասնավորապես տեղական մակարդակում քաղաքացիական շրջանառու հիմնադրամների մասին հանրության իրազեկության բարձրացման և կանաչ հիմնադրամի ձևավորման ուղղությամբ:

✓ *Խթանել բնապահպանական կրթությունը և աջակցել Կոնվենցիայի կողմից երաշխավորված իրավունքների իրականացմանը,*

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել երիտասարդների էկոլոգիական մակարդակի բարձրացմանը, կազմակերպվել է էկոլոգիական միջոցառումներ տարբեր բնապահպանական թեմաներով ինչպես կենտրոնում, այնպես էլ կենտրոնից դուրս: Մեմինարները իհարկե ուղեկցվել են Օրհուսի կոնվենցիայի լուսաբանմամբ: Կենտրոնի կամավորները մասնակցել են նաև քաղաքում անցկացված ծառատունկին:



*Նպաստել առավել ակտիվ քաղաքացիների ներգրավմանը շրջակա միջավայրի պահպանության գործընթացներին՝ աջակցելով նրանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին, կազմակերպել բնապահպանական խնդիրներ լուսաբանող միջոցառումներ, մասնավորապես Օրհուսի կոնվենցիայի խնդիրներին առնչվող:*

Արարատի Օրհուս կենտրոնը աշխատանք է տարել երիտասարդ քաղաքացիական ակտիվ խմբի ձևավորման գործում՝ իր շուրջը հավաքելով մեծ թվով կամավորների:

*✓ Աջակցել և խթանել ՔՀԿ-ների միջև համագործակցությանը և գործընկերային հարաբերությունների ձևավորմանը՝ տեղական և ազգային մակարդակներում:*

Կենտրոնի, տեղի և մարզի հկ-ների միջև ստեղծվել է մշտական համագործակցություն և աշխատանքները տարվում են համատեղ ու համաձայնեցված, շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ համատեղ են մշակվում առաջարկություններ ու նամակներ և ներկայացվում պատկան մարմիններին: Բացի այդ Օրհուս կենտրոնի և մի քանի Հկ-ների հետ սերտ համագործակցության շնորհիվ ստեղծվել է <<Հակակոռուպցիոն>> Կոալիցիա:

*✓ Աջակցել հանրային խորհրդակցության կազմակերպման գործընթացում*

Կենտրոնը տրամադրել է համապատասխան խորհրդատվություն եւ աջակցել է հասարակայնության համար խորհրդատվության կազմակերպման գործընթացին:

*✓ Համագործակցել շրջակա միջավայրի պահպանության և կայուն զարգացման հարցերով զբաղվող այլ նախաձեռնությունների կամ ծրագրեր հետ՝ տեղական և ազգային մակարդակներում*

Համագործակցությունը շարունակվում է Ադետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմի հետ: Օրհուս կենտրոնները լիազորել են իրենց անունից «Բլեջան» ՀԿ-ի նախագահին ստորագրել է Օրհուս կենտրոնների հետ համագործակցության հուշագիր: Այն ավելի է ընդլայնում համագործակցությունը շրջակա միջավայրին սպառնացող վտանգների նվազեցման ու դրանց մասին իրազեկման ոլորտում:

*✓ Հավաքագրել տեղեկատվություն կապված բնապահպանական և առողջապահական ռիսկերի հետ, որոնք առաջացնում են քաղաքային միջավայրում աղտոտված ջրից և օդից, հանքարդյունաբերական օբյեկտների մոտ և այլ բնապահպանական թեժ կետերում*

Կենտրոնը հարցումներ է ուղղել պատկան մարմիններին /ԱԻՆ, ԲՆ, ՏԻՄ/, հավաքագրել տեղեկատվություն շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող կամ շրջակա միջավայրում պլանավորվող գործողությունների հնարավոր ազդեցության վերաբերյալ: Հարցումները և ստացված պատասխանները տեղադրվել են Կենտրոնների ինտերնետային կայքում:

- ✓ Հաշվետու ժամանակում կենտրոնը ապրիլի 16-ին անց է կացրել 1 խորհրդի նիստ, որի ժամանակ տեղի է ունեցել կազմի փոփոխություն: Քննարկվել են տեղական և մարզային բնապահպանական խնդիրները:



- ✓ *Իրականացնել ծրագրի ղեկավարի կողմից հաստատված ամենամսյա գործունեության պլանով նախատեսված գործողությունները, մասնագիտական խորհրդատվության ապահովում՝ կենտրոնների աշխատանքների կազմակերպման, իրականացման մասով*

Մայիս ամսից կազմվում է ամենամսյա գործողությունների օրացույց, որը տրամադրվում է կենտրոնի փորձագետների խորհրդին եւ ծրագրի ղեկավարին: Ծրագրի ղեկավարի կողմից ապահովվում է մշտական մասնագիտական խորհրդատվություն:

Կենտրոնը մշտական համագործակցության մեջ է եղել գործընկեր բոլոր Օրհուս կենտրոնների հետ:

Կենտրոնի աշխատանքը ամենօրյա վերահսկումը եւ մոնիթորինգը իրականացվել է ծրագրի ղեկավար Լիաննա Ասոյանի կողմից՝ հետեւյալ կերպ.

#### ✓ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

ամենօրյա վերահսկողություն..

1. Ծրագրի ղեկավարի կողմից նախապես մշակված վիճակագրական հաշվետվության ձևի վրա ամենօրյա գրանցումներ կատարելով
2. Կատարած գործողությունների վերաբերյալ նյութեր, նկարներ, օրակարգեր, արձանագրություններ տրամադրելով ծրագրի ղեկավարին և տեղեատվության պատասխանատուին
3. Ամենօրյա հեռախոսազանգերով, էլ. Փոստի միջոցով և [www.facebook.com](http://www.facebook.com) սոցիալական ցանցում ստեղծված աշխատանքային խմբում քննարկումների միջոցով:
4. *համակարգողների համար հանդիպումների և վերապատրաստման դասընթացների կազմակերպում, ինչպես ԵԱՀԿ այլ ծրագրերի մասնագետների կողմից, նաև Կառավարական կառույցներից/Աշխատանքային հանդիպումներ Երևանում/*

Երևանի Օրհուս կենտրոնում 2015-ին անցկացվել է 4 աշխատանքային հանդիպումներ, որոնց ներկա է եղել կենտրոնի համակարգողը:

Հաշվետու ժամանակահատվածում Արարատի Օրհուս կենտրոնի կատարած աշխատանքներին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է վիճակագրական հաշվետվության մեջ, որտեղ գրանցված է ամենօրյա կատարած աշխատանքները՝ ըստ ճանապարհային քարտեզի:

*Ծրագրի իրականացման ընթացքում եղել են նաև թեթևակի խոչընդոտներ, որոնք շտկվել և հարթվել են :*

✓ Հաստատման միջոցները

- Անցկացված դասընթացների օրակարգներ, գրանցման թերթիկներ, արձանագրություններ
- Ուսուցողական նյութերի հակիրճ տարբերակներ,
- Պրեզենտացիաներ,
- Մասնակցության թերթիկներ
- Լուսանկարներ
- Աուդիո և վիդեո նյութեր,
- լուսաբանող նյութեր և այլն
- [www.aarhus.am](http://www.aarhus.am) կայքը

*Հաշվետվությունը կազմեց Արարատի Օրհուս կենտրոնի համակարգող Հռիփսիմե Մարգայանը*